«Հայաստանի Հանրապետություն», 25.02.2016 թ.

Նոր հնարավորություններ հետազոտողների համար

ՀՀ-ի գիտության ոլորտը համապատասխանում է «Հորիզոն-2020»-ի պահանջներին

«Ժամանակակից գիտության առջեւ ծառացած բազմաթիվ խնդիրներ հնարավոր է լուծել միայն խոշոր միջպետական համագործակցությունների շրջանակներում: Բանն այն է, որ այն պահանջում է շատ մեծ ֆինանսական ռեսուրսների ու մարդկային ներուժի կենտրոնացում: Իսկ դա չի կարող իրեն թույլ տալ ոչ մի երկիր՝ նույնիսկ տնտեսապես ամենահզորը»,—«ՀՀ»-ի հետ զրույցում դրանում հավատացրեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Վարդան Սահակյանը՝ տեղեկացնելով, որ այդ առումով «Հորիզոն-2020» ծրագրին Հայաստանի մասնակցությունը հնարավորություն է տալիս հանրապետության գիտական կազմակերպություններին, բուհերին, ինչպես նաեւ անհատ գիտնականներին ու ասպիրանտներին մասնակցելու գիտության եւ տեխնիկայի զարգացման արդի մակարդակին համապատասխանող առաջնակարգ եւ կարեւորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, խոշորամասշտաբ միջազգային գիտական համագործակցությունների աշխատանքներին: Բացի այդ, դա թույլ է տալիս օգտվել եվրոպական գիտական կազմակերպությունների եւ համալսարանների ենթակառուցվածքներից, բարձրացնել տեխնոլոգիական ու նորարարական ունակությունները, գիտական հետազոտությունների մակարդակն ու արդյունավետությունը: «Հորիզոն-2020»-ը հնարավորություն է տալիս նաեւ ընդգրկվել գիտական եւ գիտատեխնիկական կադրերի պատրաստման ու վերապատրաստման եվրոպական ծրագրերում, ավելացնել հանրապետության գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բնագավառի արտաբյուջետային ֆինանսավորման ծավալները եւ այլն:

Շուրջ 80 մլրդ եվրո՝ 7 տարվա համար

«Հորիզոն-2020»-ը գիտական հետազոտությունների եւ տեխնոլոգիական զարգացման աջակցության համաեվրոպական մասշտաբի 8-րդ շրջանակային ծրագիրն է: Այն գործելու է 2014-2020թթ. ընթացքում: Ծրագրի գերակայությունները եւ դրանց բաղկացուցիչ մասերը բավականաչափ ընդգրկուն են: Դրանք ներառում են Հայաստանի գիտության եւ տեխնիկայի զարգացման 2015-2019թթ. գերակայությունները:

«Ընդհանրապես, շրջանակային ծրագրերը, որոնք եվրոպական քաղաքականության մեջ միշտ էլ կարեւոր են եղել, եւ որոնց հիմնական նպատակները եւ գերակայությունները ֆինանսավորման պարբերականություններից կախված փոփոխվել են, սկսել են իրականացվել 1984թ.:

Մասնավորապես, առաջին շրջանակային ծրագրի իրականացման ժամկետը եղել է երեք տարի՝ 1984-1987թթ., ընդհանուր ֆինանսական ծավալը՝ 3.75 մլրդ եվրո: Շրջանակային 8-րդ ծրագրի՝ «Հորիզոն-2020»-ի ընդհանուր ֆինանսական ծավալները կազմում են շուրջ 80 մլրդ եվրո՝ յոթ տարվա համար:

Այսինքն՝ «Հորիզոն-2020»-ի տարեկան ֆինանսավորման ծավալները գերազանցում են առաջին շրջանակային ծրագրի համապատասխան ցուցանիշը մոտ 9 անգամ: Ծրագրի միջոցով ֆինանսավորվելու են գիտական հետազոտությունների, էներգետիկայի, արդյունաբերության, նորարարության, նոր տեխնոլոգիաների, փոքր եւ միջին ձեռնարկությունների գործունեության խթանման բնագավառների հայտեր»,—ընդգծեց ԳՊԿ-ի

նախագահի տեղակալը՝ ավելացնելով, որ ծրագրին կարող են մասնակցել գիտահետազոտական կենտրոնները, ինստիտուտները, համալսարանները, տեղական եւ տարածաշրջանային իշխանությունները, կորպորացիաները, փոքր եւ միջին ձեռնարկությունները, ոչ առեւտրային կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները։

Ծրագրի շրջանակներում ֆինանսավորումը հատկացվում է միայն մրցութային հիմունքներով, եւ այդ մրցույթներին իրավունք ունեն մասնակցելու հետեւյալ երկրներում ու տարածքներում հիմնադրված իրավաբանական անձինք՝ ԵՄ անդամ պետությունները, ԵՄ անդամ պետությունների իրավասության ներքո գտնվող 21 «անդրծովյան երկրները եւ տարածքները», «Հորիզոն-2020» ծրագրին ասոցացված երկրները (2015թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ դրանց քանակը 13 էր, իսկ 2016թ. հունվարի 1-ից դրանց է միացել նաեւ Հայաստանը), եւս 134 երկրներ (2015թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հրավերի պայմաններով այս կամ այն երկրի կամ երկրների մասնակցությունը բացառվում է։

Վարդան Սահակյանի խոսքերով, ծրագրին մասնակցելու համար կազմակերպություններին առաջադրված միակ պայմանը բարձր մակարդակի հետազոտությունների իրականացման ունակությունն է։ Այդ իմաստով հայաստանյան բոլոր գիտական կազմակերպությունները եւ բուհերը, նրա հավաստմամբ, բավարարում են «Հորիզոն-2020»-ի պահանջները, կարող են ու արդեն իսկ մասնակցում են ծրագրի մրցույթներին. «Իհարկե, եթե մինչեւ 2016թ. հունվարի 1-ը այդ մասնակցությունն իրականացվում էր երրորդ երկրների գիտական կազմակերպությունների կարգավիճակով, ապա ներկայում այն կարող է լինել ԵՄ անդամ-պետությունների եւ «Հորիզոն-2020» ծրագրին ասոցացված երկրների կազմակերպություններինը»։

ՀՀ անդամակցությունը՝ 87.5 տոկոս զեղչի պայմաններում

Ծրագիրը բաժանված է 3 հիմնական գերակայությունների՝ «Գերազանց գիտություն», «Արդյունաբերական առաջնորդություն» եւ «Հասարակական մարտահրավերներ»։ Դրանց համապատասխան էլ իրականացվելու է ֆինանսավորումը (համապատասխանաբար հատկացվելու է 24.4, 17. 0 եւ 31.0 մլրդ եվրո)։

Սահակյանի ներկայացմամբ, «Գերազանց գիտություն» գերակայությունն աջակցելու է համաշխարհային մակարդակի գիտական հետազոտությունների իրականացմանը Եվրոպայում՝ ներգրավելով եւ պահպանելով բարձր մասնագիտական որակավորում ունեցող հետազոտողներին ու զարգացնելով լավագույն հետազոտական ենթակառուցվածքները։ «Արդյունաբերական առաջնորդություն» գերակայությունը խթանելու է կարեւորագույն տեխնոլոգիաների (միկրոէլեկտրոնիկա, նանոտեխնոլոգիաներ, նոր նյութեր, կենսատեխնոլոգիա, առաջատար արդյունաբերության տեխնոլոգիաներ եւ այլն) զարգացմանն այն բնագավառներում, որոնք արդեն իսկ գոյություն ունեն կամ նոր են առաջանում։ Իսկ «Հասարակական մարտահրավերներ» գերակայությունն աջակցելու է հասարակությանը եւ քաղաքացիներին ուղղված հետազոտություններին եւ նորարարական նախաձեռնություններին (կլիմա, շրջակա միջավայր, էներգետիկա, հասարակական եւ հումանիտար գիտություններ, տրանսպորտ եւ այլն)։

«Դրանցից զատ, 4.6 մլրդ եվրո հատկացվելու է Նորարարության եւ տեխնոլոգիայի եվրոպական ինստիտուտի եւ Միացյալ հետազոտական կենտրոնի կողմից կազմակերպվող մրցույթներին»,—նշեց գիտության պետական կոմիտեի նախագահի տեղակալը՝

տեղեկացնելով նաեւ, որ «Հորիզոն-2020» ծրագրին ասոցացված անդամակցության համար Հայաստանը եւս յուրաքանչյուր տարի պետք է կատարի ֆինանսական ներդրում: «Հարկ է ընդգծել, որ բանակցությունների արդյունքում մեզ հաջողվել է ձեռք բերել պայմանավորվածություն, ըստ որի Հայաստանի ֆինանսական ներդրումը լինելու է հաշվարկայինի 25 տոկոսի չափով: Բացի այդ, ձեռք է բերվել եւս մեկ պայմանավորվածություն. Հայաստանի մասնակցության առաջին երկու տարիների վարձավճարի 50 տոկոսը ֆինանսավորվելու է Հայաստանում ԵՄ պատվիրակության կողմից (մյուս տարիների համար պետք է վարվեն լրացուցիչ բանակցություններ): Այսպիսով, «Հորիզոն-2020» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցությունն իրականացվում է Հայաստանի մասնակցության հաշվարկային պարտավորությունների 87.5 տոկոս զեղչի պայմաններում»,-բարձրաձայնում է Վ. Սահակյանը:

Բանակցությունների հաջողվածությունն անկասկած է

«Հորիզոն-2020» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցության համաձայնագրի կնքման վերաբերյալ բանակցությունները սկսվել են դեռեւս 2013թ. հուլիսին: Բանակցություններն ընդհանուր առմամբ տեւել են մինչեւ 2015թ. նոյեմբերը: ՀՀ կառավարությունը 29.10.15թ. N 1255 Ա որոշմամբ համաձայնություն է տվել ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցության մասին համաձայնագրի կնքմանը: Համաձայնագիրը ստորագրվելու է 2016թ. մարտի կեսերին՝ Երեւանում: Բայց 2016թ. հունվարի 1-ից այն արդեն գործում է:

«Ինչ վերաբերում է բանակցությունների հաջողվածությանը, ապա դա անկասկած է. նախ՝ «Հորիզոն-2020»-ի անդամակցության կարեւորությունը, երկրորդ՝ մասնակցության վարձավճարի աննախադեպ զեղչը՝ Հայաստանը վճարելու է մասնակցության անդամավճարի միայն 12.5 տոկոսը, եւ երրորդը՝ ապագա Շրջանակային ծրագրերին Հայաստանի մասնակցությունը լինելու է որպես «Հորիզոն-2020» անդամակցության մեխանիկական շարունակություն՝ առանց լրացուցիչ բանակցությունների»,-մեկնաբանում է Վարդան Սահակյանը՝ շեշտելով, որ պետական մարմիններն արել են առավելագույնը եւ հասել գիտության ու նորարարության զարգացման տեսակետից Հայաստանի համար կարեւորագույն համաձայնագրի կնքմանը՝ շահավետ պայմաններով: Նրա դիտարկմամբ, հիմա հերթը գիտության բնագավառում ներգրավված բոլոր կազմակերպություններինն է: Ասում է, որ նրանք գտնվում են նույն մրցակցային պայմաններում եւ կարող են ունենալ նույն ֆինանսական ռեսուրսները, ինչ ԵՄ անդամ պետությունների կազմակերպությունները. «Իսկ այդպիսի ֆինանսական միջոցներ ստանալու նախապայմանը միայն մեկն է՝ առաջնակարգ գիտական եւ գիտատեխնիկական հետազոտություն իրականացնելու կարողությունն ու ունակությունը: Այդ իմաստով «Հորիզոն-2020» ծրագրի մրցույթների մասնակցությունը նաեւ յուրովի քննություն է գիտության ոլորտի մեր կազմակերպությունների համար՝ մրցակցելու գիտության եւ տեխնիկայի բնագավառի առաջնակարգ հետազոտություններ իրականացնող եւ համապատասխան կադրային ներուժ ունեցող կազմակերպությունների հետ»: Միաժամանակ նա բարձրաձայնում է, որ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն իր հերթին պատրաստակամություն է հայտնում համակողմանի աջակցություն ցուցաբերել հայաստանյան գիտական կազմակերպություններին, բուհերին եւ, ընդհանրապես, գիտության ոլորտում ընդգրկված կազմակերպություններին՝ ծրագրի մրցույթներին մասնակցելու գործում: